2026-ի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններում
Հանրապետություն կուսակցության նախընտրական ծրագիրը
Ա 5
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
Ժամանակակից աշխարհում անգամ հզոր պետությունները անդամակցում են անվտանգային դաշինքների: ՀՀ անվտանգային դաշինքը իրեն չի արդարացրել, հետևաբար.
1. Դուրս գալ ՌԴ-ի հետ համատեղ ՀՕՊ համակարգից մինչև 2026-ի դեկտեմբերի 1-ը: Եթե ՀՕՊ-ը պատերազմի պայմաններում չի գործում, մնացած զինատեսակները վերածվում են մետաղի ջարդոնի...
2. Դուրս գալ ՀԱՊԿ-ից մեկ տարվա ընթացքում՝ հնարավորություն տալով այլ պետությունների հետ դաշինքներ ձևավորել:
3.Հնարավորինս սեղմ ժամկետում հասնել ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ ռազմական համագործակցության և փոխօգնության համաձայնագրերի կնքման:
4.Անցում կատարել պրոֆեսիոնալ բանակի՝ 5 տարում՝ ինտենսիվ տարբերակով, ամեն տարի կրճատելով զորակոչը, կամ ծառայության ժամկետը 20 տոկոսով, վերջնական արդյունքում հասնելով 90-օրյա ուսումնավարժական ծառայության: Կրճատումը իրականացնել օդում և ցամաքում մարտական հերթապահության զինծառայողներին փոխարինող նոր տեխնոլոգիական սարքերի ներդրումով:
5.Բանակին կից ձևավորել կիբեռանվտանգության ծառայություն, որը կապահովի բանակի, անվտանգային բոլոր կառույցների կապի, էներգամատակարարման և համակարգչային սերվերների անվտանգությունը:

2.ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ
Նպատակը՝ տնտեսության կառուցվածքի փոփոխություն, մոնոպոլիաների վերացում, նոր աշխատատեղեր՝ բարձր աշխատավարձերով, ռազմական, տնտեսական, ժողովրդագրական, էներգետիկ, պարենային անվտանգության ապահովում.
1. Ամբողջությամբ և արդյունավետ օգտագործել ՀՀ հանքահումքային ռեսուրսները՝ կրճատելով ՌԴ կապիտալի մասնակցությունը, որոշ դեպքերում անգամ պետականացնելով, հետագայում ակցիաներով և միջազգային բորսաներում վաճառքի հանելով:
2. ԱՄՆ-ի հետ 400 մգ/վ մոդուլային և Ֆրանսիայի հետ 600մգ/վ ատոմակայան կառուցելու պայմանագրերի կնքում՝ 2027-ից կառուցումը սկսելով:
3. Նոր ջրամբարների կառուցում, մինչև 5 միլիարդ խ/մ ջրի ամբարում և կառավարում:
4. 2025-ի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ստորագրված ՀՀ-ԱՄՆ հուշագրերի համաձայն՝ կիսահաղորդչային, տեխնոլոգիական և արհեստական բանականության ոլորտների զարգացման համար, բացառիկ արտոնյալ պայմանների ապահովում՝ ոլորտին տնտեսության զարգացման գերակա ճյուղի կարգավիճակ տալով:
5. Գերակա կարգավիճակ ռազմական արդյունաբերությանը, նոր տեխնոլոգիական և ռոբոտային ոլորտներում պետության ուղիղ

մասնակցություն: Տեխնոլոգիական ոլորտի սպասարկման աշխատողների համար 150.000 բնակչի՝ նոր կորպորատիվ քաղաքի հիմնադրում:
Այս գործընթացների իրականացումը 10 տարում գործազրկությունը կհասցնի 3%-ի:

3.ԱՐԺԵՔՆԵՐ
1.Ինքնիշխանություն. Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը անսակարկ արժեք է:
2.Ժողովրդավարություն և ազատություն. Հայաստանի Հանրապետությունում ամենաբարձր արժեքը մարդն է, ազատ ընտրության, ազատ խոսքի նրա ընտրությունն անձեռնմխելի է: Ժողովրդավարությունը պետք է պաշտպանված լինի:
3.Մշակույթ և Հայ առաքելական սուրբ եկեղեցի. Հայերենը և հայկական չորս հազարամյա մշակույթը աշխարհին ներկայանալու մեր անձնագիրն է և մեր ինքնության հավաստիքը, որ մշտական հոգածության կարիք ունի: Հայ առաքելական սուրբ եկեղեցին եղել է և պետք է լինի մեր ավանդույթների, հոգևոր և ազգային արժեքների պահապանը: Հայ առաքելական սուրբ եկեղեցին հայության անբաժան մասն է, որ պետք է ծառայի պետությանն ու ժողովրդին:
4.Սփյուռք. Հայկական սփյուռքը հայապահպանության, արտասահմանում պետության ու ժողովրդի անանց արժեքների ու շահերի պաշտպանության, միասնականության ու զարգացման կարևորագույն երաշխիք է և պետք է լինի պետականության դիրքերի ամրապնդման գրավական:
5.Ժողովրդագրություն. Տարածաշրջանում և աշխարհում ՀՀ դիմակայունության, ռազմական, քաղաքական, տնտեսական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է ժողովրդագրական պատկերի փոփոխություն՝ արտասահմանից ներգաղթի, ծնելիության աճի և երիտասարդ ընտանիքների խրախուսման, բարձր աշխատավարձով աշխատատեղերով արտագաղթը կանխելու, որակյալ կրթության, առողջապահության և այլ միջոցներով:

4.ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
1.Սահմանադրական բարեփոխումներ. կառավարման խորհրդարանական համակարգից անցում նախագահականի:
2. Համաներում՝ յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ: Համաներման արդյունքում ոչ մեծ և միջին ծանրության, որոշ դեպքերում՝ նաև ծանր, հանցագործությունների կատարման համար դատապարտված, պատիժը կրող, կամ դեռևս չդատապարտված, սակայն քրեական հետապնդման ենթարկվող անձինք կազատվեն քրեական պատասխանատվությունից: Նաև՝ գերծանրաբեռնված քրեակատարողական հիմնարկները կթեթևանան, քրեական հետապնդում իրականացնող մարմիններն ու դատարանները կլիցքաթափվեն: Համաներում պետք է իրականացվի նաև վարչահիրավական խախտումների համար պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ, որ կթեթևացնի սոցիալական դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիների՝ տարիների ընթացքում կուտակված բեռը, նաև շեշտակի կնվազեցնի թե դատարանների և թե վճարման կարգադրություններ արձակող նոտարների ծանրաբեռնվածությունը:
Համաներման իրավունք վերապահել նաև ՀՀ նախագահին:

3. ՀՀ դատական համակարգում՝ սկզբնական փուլում քրեական դատավարությունում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների գործերով, հետագայում նաև քաղաքացիական և հակակոռուպցիոն դատարաններում՝ առանձնակի կարևորություն ներկայացնող գործերով, ներդնել երդվյալ ատենակալների ինստիտուտը, որ կնպաստի արդար դատաքննության իրականացմանն ու ժողովրդի իշխանության ներկայացվածությանը դատարաններում:
4. ՀՀ դատավորների ընդհանուր թիվը 275-ից հասցնել 350-ի (պետբյուջեի ծախսերը կավելացնի ամսեկան միջինացված 112.500.000-ով), յուրաքանչյուր դատավորի աշխատակազմում ավելացնել դատավորի օգնականի ևս մեկ հաստիք (պետբյուջեի ծախսերը կավելացնի ամսեկան միջինացված 122.500.000-ով): Կլորացված հաշվարկներով՝ պետբյուջեի ծախսերը տարեկան մոտ 3 միլիարդ դրամով ավելացվելու դեպքում, առաջարկվող ռեֆորմների արդյունքում ՀՀ դատական համակարգը կլիցքաթափվի առնվազն 60 տոկոսով:
5. Արդարադատություն իրականացնող պետական և մասնավոր համակարգերի և ինստիտուտների (դատախազություն, քննչական մարմիններ, փաստաբանների, հաշտարարների, նոտարների պալատներ, պետական և մասնավոր փորձագիտական կազմակերպություններ) շարունակական զարգացում, նրանց գործունեության նկատմամբ վերահսկողության ուժեղացում

5.ԱՊԱԳԱ
Նպատակ՝ մինչև 2040-ը Հայաստանը դարձնել անվտանգ, զարգացած, տեխնոլոգիական պետություն՝ աճող բնակչությամբ:
1. Հայաստան 2040՝ ազգային երկարաժամկետ ծրագիր, որի հիմնական կրողը քաղաքացին է: Նա էլ գաղափարական ընտրությամբ կապահովի ծրագրի շարունակականությունը չխաթարող իշխանափոխություն: Համաշխարհային միտումներին, անվտանգային նոր ճարտարապետությանը, տնտեսական վերափոխումներին համընթաց՝ պետության զարգացման գաղափարախոսություն՝ համաժամանակյա զարգացում՝ պահպանման և արդիականացման համադրում: Մեր նպատակն է՝ ունենալ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, որն անվտանգ է, բարեկեցիկ ու զարգացող: ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, որը ՀԵՌԱՆԿԱՐ ունի, որի քաղաքացիները գիտեն երազել ու սիրել իրենց ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅՐԵՆԻՔԸ, ԱՇԽԱՐՀԸ: ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, որ միավորում է ԲՈԼՈՐ հայերին:
2.Կառավարության կառուցվածքը համալրել՝ ավելացնելով փոխվարչապետի պաշտոն՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների կանոնակարգման, ստորագրված համաձայնագրերի կատարման նպատակով: Հավելել Ատոմային էներգիայի և էներգետիկայի, Գյուղատնտեսության և ջրային ռեսուրսների, Մշակույթի և սփյուռքի նախարարություններ:
3.Կրթություն. բարձրագույն և միջին մասնագիտական կրթությունը պետք է լինի անվճար և լուծի երեք հիմնական խնդիրները՝ կրթության որակ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանություն, մարզերի կրթական հավասար հնարավորություններ:
4.Առողջապահություն
Համընդհանուր առողջապահական ապահովագրությանը հավելել պարտադիր առողջապահական ապահովագրությունը՝ ներառելով երեխաներին, թոշակառուներին, հաշմանդամություն ունեցող աձանց,

սոցիալապես անապահով ընտանիքներին: Թվային առողջապահության՝ միասնական էլեկտրոնային համակարգի արդիականացում, քաղաքացիների հիվանդության պատմության թվային պահպանում, հազվադեպ հիվանդությունների հատուկ ուսումնասիրություն՝ գիտական նոր լուծումների ակնկալիքով:
5.Արտաքին քաղաքականություն
Հայաստանի Հանրապետությունը վարելու է սեփական շահերից բխող քաղաքականություն՝ խորացնելով հարաբերությունները ժողովրդավարական արժեքներ կրող պետությունների հետ: Այդ նպատակով՝
1.TRIPP-ի իրականացումը հնարավորինս արագացնել՝ իբրև ինքնիշխանության ամրապնդման, անվտանգության, տնտեսական զարգացման, էներգետիկ անվտանգության գրավական:
2.Ամրակայել օրենսդրական և տնտեսական նախադրյալները ԵՄ անդամակցության համար մինչև 2032-ը, ավարտել SEPA-ն, ԵՄ վիզաների ազատականացումը ու Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտուն անդամակցության գործընթացը:
3.ՌԴ-ի հետ կնքել առկա իրավիճակին համապատասխան, համագործակցության նոր և ընդգրկուն համաձայնագիր՝ չեղարկելով անկախացումից հետո կնքված համաձայնագրերը: Դուրս գալ ԱՊՀ-ից և ԵԱՏՄ-ից՝ տնտեսության անցնցում անցում ապահովելով մինչև 2031-ը:
4.Դիվանագիտական հարաբերությունների հաստատում Ադրբեջանի և Թուրքիայի հետ և ՀՀ լիակատար ապաշրջափակում:
5.Փոխշահավետ դաշնակցային հարաբերությունների հաստատում և զարգացում Իսրայելի հետ և արաբական աշխարհի այն պետությունների, որոնց հետ ունենք շահերի համընկնում: Խորացնել առևտրատնտեսական կապերը Հնդկաստանի և Միջինասիական պետությունների հետ:

‘Հանրապետություն’ կուսակցությունը միշտ գործել է ‘Քեզ համար, Հայաստան, քեզ համար’ կարգախոսով: